



42. ՎԻՇԱԲ 08Ը

Մե մարթու մե կնիկ են հըլնում: Մե օր էս մարթը էթում ա չոլը ման գալու: Չոլի կանանչի էլ ջուռ ժամանակն ա հըլնում: Մարթն էթում էր ու սինձ էր քաղում, մեկ էլ նազարատան ուր կպավ մե քոլի, ու մարթը գորավ, հընգավ մե փասի մեջ: Էլ չըկացավ փասից դուս գա: Դու մի ասա, էս փասը վիշաբ օցի բունն ա հըլնում ա, հը- մա մարթը չի հիմանում:

Էս մարթը մտածում ա ու հինքն հիրան խոսում ա.—Վայ, վայ, օխտ ախշրքի մեջը հելա խայտառակ, օրը ցերեկով էկա հընգա էս փասը: Մարթ էլ գա, էս տեսակ քոռաղրքի հընգսի փա՞սը:

Մե սհաթ, էրկու սհաթ էս մարթը տանջվում ա, տենում ա չի կանում դուս գա, նստում ա:

Մեկ էլ տենում ա հեսա մե վիշաբ օց էկավ, գլոխը կախեց փասը: Օցը գլոխը կախեց, տեսավ բնի մեջ մե մարթ կա: Օցը յավաշ հիշ- նում ա բունը, մարթին չի դիրնում, էթում ա, բնի մեջ մե սալ քար կար, սկսում ա լիզել: Օցն ուզում ա, որ մարթն էլ լիզա, անոթի կըլնի, հըմա մարթը օցի միտքը չի խասկնում ա:

Օցն էթում ա էրկու խատ դուշ ա բոնում, բերում քցում ա մար- թի հառեցը, որ մարթն ուտա, էլի մարթը չի խասկնում, հիշկում ա օցին ու դողում ա: Օցը տենում ա, որ մարթը վախենում ա, գլոխը թեքում ա էն յանը: Օցը տենում ա, որ մարթին օքնել չի կանում, հիրան լիզու չեն խասկնում, հիրա պոչը տալում ա մարթի դոլթու- դի տակ, վերցնում ա ու խորից խանում: Մարթը տենում ա, որ էսի բարի օց ա, վազեվազ գալում ա տունը, էս բոլորը կնգան նաղլ ա անում: Կնիկը մնում ա զարմացած:

Առավոտը հըլնում են, մարթը կնգան ասում ա.—Այ կնիկ, էն վիշաբ օցը ընձի բան չասավ, ձեռ չըտվեց, արի էրկու վեղրո կաթ կթա՛, տանեմ օցին:

Կնիկը կաթը կթում ա, լցում ա վեղրոքը, տալում ա մարթին: Մարթը տանում ա, զնում ա օցի բնի դրաղը: Օցը տենում ա, որ հե- րեկվա մարթն ա, կաթ ա բերե: Խասկնում ա: էրկու վեղրո կաթն էլ խմում ա, վեղրոների մեջը մեկ-մեկ ուսկի ա քցում, մարթը գալում ա վեղրոքը տանելու, տենում ա մեչները մեկ-մեկ ուսկի: Շատ ա

գարմանում: Ոսկիքը ջերն աքցում ու գալում ա տունը: Էլի Կնգան ասում ա օցի արածը ու ոսկիքը տալում ա կնգան: Էս տեսակ քաշում ա մե ամիշ: Ամեն օր օցին կաթ ա բերում, ոսկիքը տանում ա:

Մե օր էլ կնիկն ասում ա.—Մա՛րթ, էսօր ես էլ խետըտ կըգամ օցի մոտ, տենամ էտ իմալ օց ա:

Մարթի խետ վերցում են վեղրոքը, էթում են: Օյը մարթին ծանոթ էր, հըմա տեսավ, թե չէ մոտցավ, կաթը խմավ, էտ օրը էլի էրկու ոսկի տվեց, կնգան էլ մե ջուխտ բլազուկ: Մարթ ու կնիկ ուրախ-ուրախ էկան տուն:

Բարի մարթը մտածում ա օցի մասին, կնգան ասում ա.—Այ կնիկ, շուտով ցրտերը կըհընգնեն, օյը կըմրսի, բեր օցի խըմար մե խալիչա առնենք, տանենք քցենք փոսը, թո օյը փաթթվի, խալիչի մեչը չըմրսի:

Կնիկն ասում ա.—էտ ա մացե, որ օցին էլ խալիչին մեչ պախենք, էտքան կաթ ենք տալում, չի՞չ ա, հիմի էլ տանենք էրկու ոսկի տանք, մե խալիչա առնենք, որ օյը խալիչի մեչ քնի:

Մարթը կնգան չի լսում, խալիչա յա առնում, տանում ա օցին:

Օյը շատ ա ուրիխնում, պարկում ա խալիչի մեչը: Մե օր էս մարթի տունը մե օց բռնող կնիկ ա գալում: Էս մարթի կնիկը, որ հիմանում ա էս կնիկը օց բռնող ա, մանղրամաս պատմում ա օցի մասին, թե իմալ հիրա մարթը փոսն ա հընգե, օյը դուս ա խանե, մարթը օցին խալիչա յա տվե: Հըմա ոսկու մասին բան չի ասում:

Էս կնիկն ասում ա.—Օյի տեղն ընձի նշանց տու, ես կըբռնեմ, մե օր էտ օյը չեղ էլ, քո մարթին էլ կըկծա:

Էս կնգան խելքը բզում ա, կնիկը օցի բռնող նշանց ա տալում: Էս օց բռնող պառավը գալում ա, հիշնում ա փոսը, մե խալիչա յա փոռում:

Օյը հիմանում ա, թե էլի նվեր են բերել, սողալով գալում ա, կտոտվում ա, նստում ա խալիչի վրեն: Էս կնիկը շուշուտ խալիչեն փաթթում ա, օցին կապում ա ու բերում ա տունը:

Հիրկուն մարթը գալում ա տունը, կնիկը մարթին ասում ա.—Մա՛րթ, էս կնիկը օցին բռներ ա, կապեր ա, արի էթանք, մտնենք օցի բռնը, ինչքան ոսկի կա, բերենք:

Մարթն ասում ա.—Այ քո վիզը կողրվի, կնի'կ, էտ տեսակ էլ դավաճանություն կանեն: Օյը մեզի էտքան լավություն արավ, ոսկի տվեց, արուն-դարունի տեր դարցանք, հիմի տարար էտ տեսակ լավություն արողին մատնի՞ր:

Էստեղ մարթ ու կնիկ վիճում են, օյը լսում ա: Էս օց բռնող կնիկն էլ ա լսում, շուտ վերցնում ա օյը, որ փախնի: Մարթը տենում ա, որ կնիկն օյը առավ փախնում ա, ձեռի բալթեն շպոտում

ա կնգա հետեից, բալթեն բռնում ա խալիչին, կապերը կդրում ա, օցը դուս ա գալում, հըմա բալթի ծերը կպնում ա, օցի պոչը յարալու յա անում:

Օցը խալիչից դուս ա գալում, էս մարթին ասում ա.—Բարի՛ մարթ, էտ կնիկը կախարթ ա, կանաս զըն սպանա, թե չէ քո տունը կըքանդա:

Մարթը վագնում ա, բալթեն վերցնում ա, տալում ա էտ օց բռնող պառավին սպանում ա:

Էս պառավն էլի քսան օց էր բռնե, լցեր էր մե դութու մեչ: Էս մարթի կնիկը տենում ա, որ մարթը պառավին սպանեց, վագնում ա, պառավի դութին բացում ա, որ տենա ի՞նչ կա մեչը:

Հենց բացում ա, թե չէ, բոլոր օցերն էլ թափում են էս կնգա վրեն, հարուր տեղով կծում, մարթը տենում ա ու գարմանում, էլ տուն չի մտնում: Հո՞ւր մտնի, տունը լինքը օց, մտնե՞լ կըլնի: Էս մարթը մնում ա շիվար: Էթում ա, քնում ա հարևանի տունը, ամեն բան պատմում ա:

Հարևանները զարմանում են: Առավոտը գալում են էս մարթի տան մոտ: Տենում են էս պատի տակից օց ա դուս գալում, մտնում ա էն պատի տակը, էն պատի տակից դուս ա գալում, մտնում ա էն պատի տակը: Քան օցն էնքան են հըլնում ու մտնում, որ հարևանները կարծում են, թե հազար օց կա, թողում փախնում են:

Ճեսօրին էս մարթը էթում ա օցի բնի յանը:

Տենում ա՝ օցը պարկեր ա արևի տակ, հըմա պոչը խլվցնում ա, հիշկում ա, տենում ա՝ օցի պոչը յարալու յա, հինքն հիրան ասում ա.—Այ ձեռ կողրպիր, հընչի՞ խեխճ անասունին յարալու արիր, էս խեխճը ի՞նչ մեղավոր էր:

Օցը ետ ա դառնում, մարթին տենում ա, չի ուզում, որ մարթն իմանա, որ պոչը յարալու յա, ծասկում ա, ուրախ-ուրախ մարթին ասում ա.—Բարով էկար, բարի՛ մարթ, ասա՛, ի՞նչ ես ուզում, կըտամ, դու իմ ջանքը փրգեցիր, ես էտ կախարթ կնգանից պոճա:

Էս մարթն ասում ա, որ տունը օցերով ա լցվե, կնգան էլ օցերը խեխտեր են, հինքը մինակ ա մացե, հէսօր հարևանի տանն ա քնե:

—Մկա, օց ամսպեր ասե՞մ, թե օց քուր ասե՞մ, չեմ հիմանում, թե ինչ անեմ: Ոչ կնիկ ունեմ, ոչ տուն ունեմ:

Օցն ասում ա.—Բարի՛ մարթ, ես չեզի տուն էլ կըտամ, կնիկ էլ կըտամ, հըմա դուզն ասեմ, որ կնիկը թոփալ ա:

Էս մարթն ասում ա.—Քոռ հըլնի, թոփալ հըլնի, գունդ հըլնի, տերն եմ:

—Դե, որ տերն ես,—ասում ա օցը,—կէթաս էս ինչ մեշեն, մեշի մեչը մե տուն կա, կըմտնես էն տունը:

Էտ տանտերը մե թոփալ կնիկ ա, Հըմա շատ ուկի ու մարքարիդ ունի, կըվերցնես կնգան, կըզնաս մե քաղաքի մեջ տուն կըշինես, յա կառնես դու ու քո կնիկը բախտավոր կապրեք:

Մարթն ասավ.—Ա'յ օց, իմ կողրած ձեռը քո պոչը յարալու յա արե: Դու ծասկեցիր, որ ես չըտենամ, Հըմա տեսա: Ես կըմնամ ըս- տե, դեղ կըբերեմ, քո պոչը կըլավացնեմ, Հետո կէթամ: Զեզի էտենց չեմ թողի էթա:

Օցն ասում ա.—Դու գնա՛ իմ ասած տեղը, Էն կնգան տե՛ս, թե կըխավնե՞ս, կառնես չեղի կնիկ, թե չես խավի՞ն, կըզաս, ես չեղի ուկի կըտամ, կէթաս կարես, իմ պոչը դու չես կանա լավացնի, Հինքն հիրան կըլավանա: Դե գնա, Էլ մի՛ սպասա:

Մարթը գնաց, գնաց, խասավ էտ տունը, տեսավ դռան հառեչը մե պառավ ա նստուկ, ասավ.—Ա'յ նանե, Էս տանը մինակ դու ե՞ս, թե՞ ախճիկ էլ ունես:

Նանեն ասավ.—Նանեն չեղի դուրբան Հըլնի, մե ախճիկ ունեմ, Հերեկ չեմ Հիմանում՝ ինչ ա պատահե, բալթով տվեր են, ոտը յա- րալու են արե: Ինչ անում եմ, չեմ անում, չի ասում, թե ինչ ա պա- տահե, որն ա արե:

Էս մարթի սիրող կածկած ա Հընգնում: Զըլնի՞ Էս կնգա ախճի- կը հենց էն օցն ա:

—կարեի՞ ա ախճկատ տենալ, նանե՛:

—Նանեն չե դուրբան, արի՛ տուն:

Էս մարթը որ ներս ա մտնում, մե սիրուն կնիկ գալում ա հառե- չը, բարևն առնում ա, Համմեցեք ա անում նստելու: Էս մարթը նստում ա, դինջանում ա, ետո էս կնգան պատմում ա հիրա գլխի էկածը և վերջը ասում ա օցի ասածը, որ օցն հիրանը Հղրկեր ա, որ ամուսնանա էս տանն ապրող թոփալ կնգա խետ:

—Էս տան թոփալ կնիկը ես եմ, ընձի խավա՞ն ես:

—Էն օցը, որ ընձի ասա՛ գնա քարից Հընգի՛, կըՀընգնեմ, Հո՞ւր մնաց, որ չեղի նման խորոտ կնգան չառնեմ:

Էստեղ կնիկը պատմում ա, որ Հինքն էն օցն ա, Էն օց բռնող կա- խարթ կնիկը հիրանը օց էր դառցրե, Էն տան մըչի օցերն էլ հիրան քուրերն են: Մկա Հինքը կախարթութունից ազատվեր ա, ոտն էլ շուտով կըլավանա:

Էստեղ ըստոնք մարթ ու կնիկ են դառնում, գնում են էն օցերին էլ լողացնում են կախարթ պառավի արնի մեջ, դառնում են ախ- ճիկ, մարթի են էթում: Ըստոնք էլ էթում են մե քաղաք, տուն են առնում, ապրում են մինչև խորը ծերություն: Երգնքից իրեք խնձոր Հընգավ, ճիսեցին, խեչաթն ասողն ու լառները ճերան: